

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 6 «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍՎՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՄՎՀ ԳՀԾՁԲ 23/1

ք. Էջմիածին

«18» օգոստոսի 2023 թ.

Վաղարշապատի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտակ Մարտիրոսյան Համլետի» ԱԶ-ն, ի դեմս Ա. Մարտիրոսյանի, որը գործում է սեփական նախաձեռնությամբ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած՝ կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Կապալառուի կողմից շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
2	Կապալառուի կողմից շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն չունենալու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից աղբի, կենցաղային թափոնների և օտար առարկաների չհեռացման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով

4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութի և հողի վերին շերտի չտեղափոխման և հատուկ նախատեսված վայրերում չպահելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
5	Նախագծային փաստաթղթերով չնախատեսված դեպքերում ծառաբնակային բուսականությունը հատելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չլինելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակների (ծրագծի սկզբում և վերջում) չտեղադրման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
8	Վտանգավոր տեղամասը չցանկապատելու, շինարարական տեղամասում ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախագծային շահանքային նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսազդանշանային առկայծող լապտերներով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
9	Տեղամասերում կուտակված շինարարական աղբը, թափոնները հատուկ հատկացված վայրեր չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում սանիտարական պայմանների չպահպանման մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առաջին բուժօգնության և հակահիդրոէկային միջոցների բացակայության մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմի կողմից հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ծեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) չկրելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) չպահպանելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
14	Շինարարական նյութերը և թափոնները ծածկված բեռնատարներով չտեղափոխելու մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկական և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չլինելու (ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) մասին խախտումը չվերացնելու վերաբերյալ սահմանված կարգով հավաստում չտրամադրելը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ՝ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Ա. Մարտիրոսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71351540	Տես հավելված 1.1	հատ	2000000	1	ՀՀ, Արմավիր մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Մ. Մելիսյան 35/2	«11» օգոստոսի 2024 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վաղարշապատի համայնքապետարան
Արմավիր, ք. Էջմիածին, Սք. Մ. Մաշտոց-0
ՀՀ Ֆ.Լ. Գործառնական վարչ-ն
Հ/Հ՝ 900322201030
ՀՀՀՀ՝ 04440307

Համայնքի ղեկավար՝

Դ. Գասպարյան



ԿԱՏԱՐՈՂ

«Արտակ Մարտիրոսյան Համլետի» ԱԶ
Գեղարքունիք, գ. Գեղաքար, 2 փ., տ. 4
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 19300548769200
ՀՀՀՀ՝ 74370639

ԱԶ

Ա. Մարտիրոսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովվի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական սպեցիֆիկացիաներին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:

2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

3. Տեխնիկական հսկողի հիմնական պարտականություններն են՝

- շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,

- ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին,

- Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,

- ստուգել և հաստատել բանվորական գծագրերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,

- ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելվել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,

- վերահսկել և գնահատել շինարարական աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,

- ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,

- ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,

- կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում,

- գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,

- հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինարարական աշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,

- կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),

- ստուգել և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ Կապալառուի կողմից նախապատրաստված բանվորական նախագծերի մեջ,

- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,

- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները:

Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վաղարշապատի համայնքապետարան
Արմավիր, ք. Էջմիածին, Սթ. Մ. Մաշտոց 0

ՀՀ ՑԼ Գործառնական վարչ-ն

ՀՀ 900322201030

ՀՀ 04440307

Համայնքի ղեկավար՝

Կ. Ս. Գևորգյան

Կ. Ս. Գևորգյան

ԿԱՏԱՐՈՂ

«Արտակ Մարտիրոսյան Համլետի» ԱԶ
Գեղարքունիք, գ. Գեղաքար, 2 փ., տ. 4

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

ՀՀ 19300548769200

ՀՀ 74370639

ԱԶ՝

Ա. Մարտիրոսյան

Կ. Ս. Գևորգյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱՇԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 6 «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը
1	2	3	4
1. Քանդման աշխատանքներ /Մասնաշենք 1/			
1	Փայտյա դռների քանդում	քմ	17,88
2	Փայտյա պատուհանների քանդում պատուհանագոգերով /հանձնում պատվիրատուին/	քմ	1.95
3	Մետաղապլաստ պատուհանների և դռների ապամոնտաժում	քմ	79.85
4	100 մմ և 150 մմ հաստությամբ միջնորմերի քանդում	քմ	79.78
5	Բետոնե սալիկներից հատակների քանդում	քմ	53.2
6	Պատերից գ/ավազի շերտի քանդում	քմ	222
7	Պատերից գաջի սվաղի քանդում	քմ	421.3
8	Շեպերից գաջի սվաղի քանդում	քմ	29.7
9	Մետաղական բազրիքների ապամոնտաժում	գծմ	8
10	Պատերից կերամիկական սալիկների քանդում	քմ	222
11	Մանրատախտակից հատակների քանդում	քմ	244.5
12	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	քմ	30.4
13	Ե/բ աստիճանների և բազրիքների քանդում	խմ	5.343
14	Ցեմ/ավազի հարթեցնող շերտի քանդում	քմ	328.1
15	Բետոնից հատակների քանդում 100 մմ շենքի ներսում /457 քմ/ խճե նախաշերտով	խմ	16.35
16	Հին տանիքածածկի ապամոնտաժում	քմ	260.5
17	Ջրհորդանների քանդում	քմ	42.77
18	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում, այդ թվում կավարամած, հոծ տախտակամած	խմ	8.6
19	Տանիքի ջրատար խողովակների ապամոնտաժում, այդ թվում ջրհորդաններ	գծմ	24
20	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5 կմ	տն	251.8
2. Քանդման աշխատանքներ /Մասնաշենք 2/			
1	Փայտյա դռների քանդում	քմ	48.33
2	Փայտյա պատուհանների քանդում պատուհանագոգերով /հանձնում պատվիրատուին/	քմ	5.2
3	Մետաղապլաստ պատուհանների և դռների ապամոնտաժում	քմ	124.99
4	100 մմ և 150 մմ հաստությամբ միջնորմերի քանդում	քմ	231
5	Բետոնե սալիկներից հատակների քանդում	քմ	51.6
6	Պատերից գ/ավազի շերտի քանդում	քմ	144.6
7	Պատերից գաջի սվաղի քանդում	քմ	703.1
8	Շեպերից գաջի սվաղի քանդում	քմ	52.1
9	Մետաղական բազրիքների ապամոնտաժում	գծմ	8
10	Պատերից կերամիկական սալիքների քանդում	քմ	144.6
11	Մանրատախտակից հատակների քանդում	քմ	487.4
12	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	քմ	115.05
13	Ե/բ աստիճանների և բազրիքների քանդում	խմ	4.795
14	Ցեմ/ավազի հարթեցնող շերտի քանդում	քմ	731.05
15	Բետոնից հատակների քանդում 100 մմ շենքի ներսում /457 քմ/ խճե նախաշերտով	խմ	37.195
16	Հին տանիքածածկի ապամոնտաժում	քմ	532
17	Ջրհորդանների քանդում	քմ	71.89
18	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում,այդ թվում կավարամած, հոծ տախտակամած	խմ	17.4
19	Տանիքի ջրատար խողովակների ապամոնտաժում, այդ թվում ջրհորդաններ	գծմ	36
20	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5 կմ	տն	432.16
3. Քանդման աշխատանքներ /Մասնաշենք 3/			
1	Փայտյա դռների քանդում	քմ	13.23
2	Մետաղական դռների ապամոնտաժում	քմ	1.89
3	Մետաղապլաստ պատուհանների և դռների ապամոնտաժում	քմ	14.6
4	100 մմ հաստությամբ միջնորմերի քանդում	քմ	102
5	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	քմ	113.1
6	Ցեմ/ավազի հարթեցնող շերտի քանդում	քմ	113.1
7	Բետոնից հատակների քանդում 100 մմ շենքի ներսում /457 քմ/ խճե նախաշերտով	խմ	11.31
8	Քարե կրող պատերի քանդում	խմ	67
9	Խամքարե հիմքերի քանդում	խմ	51.5
10	Ե/բ ծածկի սալերի ապամոնտաժում	հատ	13
11	Հին տանիքածածկի ապամոնտաժում	քմ	151.7
12	Ջրհորդանների քանդում	քմ	29.96
13	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում,այդ թվում կավարամած, հոծ տախտակամած	խմ	5.8
14	Տանիքի ջրատար խողովակների ապամոնտաժում, այդ թվում ջրհորդաններ	գծմ	12
15	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5 կմ	տն	291.95
4. Կոնստրուկտիվ մաս			
Հողային և քանդման աշխատանքներ			
1	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողմից	խմ	1400

2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողիցք	խմ	100
3	Հետիցք տեղի բնահողով մեխանիզմով	խմ	1200
4	Գրունտի բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա	խմ	300
5	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 5 կմ	տն	510
	Ե/բետոնե միաձույլ հիմնային հեծան		
1	Խճի շերտի պատրաստում	խմ	19.8
2	Բետոնե նախաշերտի պատրաստում B 7,5 դասի բետոնից	խմ	19.8
3	Խամքարաբետոնե հիմքերի պատրաստում պատրաստում B-7.5 դասի բետոնից	խմ	48.6
4	Միաձույլ ե/բ հիմնային հեծանի պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	63.3
5	Ամրան Փ18 A500C	տն	7.5719
6	Ամրան Փ8 A240	տն	4.8988
7	Ջրամեկուսացում 2 շերտ քիտումի քուլով	քմ	122
	Ե/բետոնե հատակի սալ		
1	Խճի շերտ տոփանումով	խմ	66.6
2	Միաձույլ ե/բ սալի պատրաստում B-15 դասի բետոնից	խմ	66.6
3	Ամրան Փ8 A240	տն	1.4453
	Բացվածքների բացում և փակում		
1	Պատերի քանդում 500 մմ հաստության	խմ	34.3
2	Շին աղբի բարձում ձեռքի սալակի վրա տեղափոխում մինչև 20 մ, դուրս բերում	տն	61.74
3	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 5 կմ	տն	61.74
4	Պատի շարվածք կ/ձևի տուֆ քարից 500 մմ հաստությամբ	խմ	39.8
5	Կրող պատերում անցքերի բացում Փ400 մմ, Փ14 մմ	հատ	180
6	Պոլիմեր-շաղախի ներարկում անցքերի մեջ	խմ	0.1
7	Շարվածքի ամրանավորում	տն	0.4477
8	70x70x6 անկյունակի արժեքը	զձմ	2070.4
9	N16Y տաշտածև հեծանի արժեքը	զձմ	91.3
10	60x6 պողպատե թիթեղի արժեքը	տն	0.9158
11	Ամրան A500C արժեքը	տն	0.6214
12	Ամրան A240 արժեքը	տն	0.0197
13	Փ5Br1-150x150 ցանցի տեղադրում	տն	0.4774
14	Փ5Br1-150x150 ցանցի արժեքը	քմ	220
	Պատերի ուժեղացում		
	Ե/բետոնե շապիկ		
1	Անցքերի շաղափում Փ14 մմ L=300 մմ	հատ	2850
2	Անցքերի շաղափում Փ14 մմ L=600 մմ	հատ	1640
3	Ամրանների տեղադրում անցքերում	տն	2.0319
4	Փ5Br1-150x150 ցանցի տեղադրում	տն	0.7595
5	Փ5Br1-150x150 ցանցի արժեքը	քմ	350
6	50 մմ հաստ.պատերի տորկրետ սվաղ. B20 դասի բետոնից /126.1 խմ/	քմ	308
7	Պոլիմեր-շաղախի ներարկում անցքերի մեջ	խմ	0.35
	Ներքին աստիճանավանդակի վերականգնում		
1	Անցքերի շաղափում Փ20 մմ, L=200 մմ	հատ	80
2	Պոլիմեր-շաղախի ներարկում անցքերի մեջ	խմ	0.01
3	Ցեմենտավազե սվաղ ցանցով	քմ	45
4	Փ5Br-1 ցանցի արժեքը	քմ	45
5	Ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0.22576
6	50x50x5մմ անկյունակի արժեքը	զձմ	56
7	Ամրան Փ12 A500C արժեքը	տն	0.018
	Ծածկի սալի ուժեղացում նիշ +3,300, +6,600		
1	Կողավոր պանելի քանդում	խմ	13.5
2	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 5 կմ	տն	23.625
3	Անցքերի բացում 60x120 մմ չափերի, 1100 հատ	քմ	21.312
4	Ծածկի սալի ուժեղացում B20 դասի թեթև բետոնից	խմ	53.1
5	Ամրան A240 արժեքը	տն	1.406
6	Ամրան A500C արժեքը	տն	3.4554
7	Փ5Br1-150x150 ցանցի տեղադրում	տն	2.6822
8	Փ5Br1-150x150 ցանցի արժեքը	քմ	1236
9	Ծածկի սալի իրականացում B25 դասի ծանր բետոնից	խմ	20.5
	Ե/բետոնե սյուներ և հեծաններ		
1	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	14.1
2	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	9.9
3	Ամրան A500C արժեքը	տն	5.507
4	Ամրան Փ8A240 արժեքը	տն	1.493
5	C235 մակնիշի պողպատից տափօղակ 100x100x20 մմ	հատ	148
	Նոր իրականացվող մասնաշենք		
	Հիմքեր		
1	Խճի շերտի պատրաստում	խմ	21.2
2	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	խմ	21.2
3	Միաձույլ ե/բ պատերի պատրաստում B25 դասի բետոնից	խմ	11

4	Ամրան A500C արժեքը	տն	8.8994
5	Ամրան A240 արժեքը	տն	2.7969
6	Խամբարաբետոնե հիմքերի պատրաստում B-7.5 դասի բետոնից	խմ	6.7
7	Ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	քմ	288
8	Միաձուլյ է/բ հիմնային հեծանի պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	99.7
	Ե/բետոնե հատակի սալ		
1	Խճի շերտի պատրաստում տոփանումով	խմ	52.4
2	Միաձուլյ է/բ հատակի սալի պատրաստում B-15 դասի բետոնից	խմ	52.4
3	Ամրան Փ8A500C	տն	1.1371
	Ե/բետոնե շրջանակների իրականացում		
1	Միաձուլյ է/բ սյուների պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	58
2	Միաձուլյ է/բ պարզունակների պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	158
3	Միաձուլյ է/բ պատերի պատրաստում B25 դասի բետոնից	խմ	14.5
4	Ամրան A500C արժեքը	տն	38.091
5	Ամրան A240 արժեքը	տն	4.935
6	Խարսխային տափօղակ	կգ	766.8
	Ծածկի սալեր		
1	Միաձուլյ է/բետոնե ծածկի սալի պատրաստում B25 դասի բետոնից	խմ	208.7
2	Միաձուլյ է/բ ծածկի հեծանների պատրաստում B25 դասի բետոնից	խմ	8.3
3	Ամրան A500C արժեքը	տն	24.7457
4	Ամրան A240 արժեքը	տն	0.3958
	Օղափոխության բլոկի թասակներ		
1	Օղափոխության հորանների իրականացում խարամաբետոնից	խմ	10.5
2	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0.475
3	Թեթև բետոն B-7.5	խմ	5.25
4	Ջերմամեկուսիչ շերտ 100 մմ հաստության հանքային բամբակից	խմ	10.05
5	Անկյունակներից կարկասի պատրաստում	տն	0.14
6	40x40x3 մմ մետաղական խողովակի արժեքը	գծմ	40
7	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	քմ	6.4
8	Թասակների պատրաստում 0,5 մմ հարթ գինկապատ թիթեղից	քմ	10.75
9	Գոգնոցների պատրաստում 0,5 մմ հարթ գինկապատ թիթեղից	քմ	100.5
	Խարամաբետոնե բլոկներից արտաքին պատեր		
1	Արտաքին պատերի շար գեմենտավազե բլոկներով 200*200*400 անցքերի լցումով 2 տակ	խմ	212
2	Պատի շարվածքի ամրանավորում	տն	3.52
3	Ե/բ բարավորների իրականացում B-15 դասի	խմ	11.5
4	Թեթև բետոն B-7.5	խմ	53
5	Ամրան Փ8A500C	տն	3.348
6	Ամրան Փ6A240	տն	0.1725
	Ներքին աստիճանավանդակ		
1	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	խմ	0.2
2	Միաձուլյ է/բ հեծանի պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	0.2
3	Աստիճանների խամբարաբետոնից հիմքերի B15 դասի բետոնով	խմ	1
4	Միաձուլյ է/բ աստիճանների պատրաստում B-25 դասի բետոնից	խմ	6.4
5	Ամրան Փ18A500C	տն	0.4808
6	Ամրան Փ8A240	տն	0.0498
	Մետաղական աստիճաններ		
1	Մետաղական աստիճանի տեղադրում ներառյալ նյութը	տն	3.01486
2	Մետաղական աստիճանի ներկում երկշերտ հակակոռոզիոն ներկով	տն	3.01486
3	Խճի շերտի պատրաստում	խմ	0.3
4	Բետոնե նախաշերտի պատրաստում B7,5 դասի բետոնից	խմ	0.3
5	Բետոնե հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	խմ	1
	5. Ճարտ. շին. մաս		
	Հատակներ		
1	Պրեեսգրանիտե հատակների իրականացում 500x500 մմ սալիկներով	քմ	684
